

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	5
1.4. Առևտուր	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	9
4. ՓՈԽԱՐԺԵՔ	10
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Պետական բյուջեի եկամուտները	11
5.2. Բյուջեի ծախսերը	13
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	14
5.4. Կառավարության պարտք	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ	16
6.3. Վարկեր	17
6.4. Դրամական փոխանցումներ	20
7. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունվար-հուլիս ամիսներին տնտեսական ակտիվության աճը պահպանվել է համեմատաբար բարձր մակարդակում, թեև հուլիսին դանդաղման միտումը շարունակվել է: 2026թ. հուլիսին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) 12-ամսյա աճը կազմել է 6.5%՝ հունիսի 7.4%-ի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը կազմել է 7.7%՝ հունվար-հունիսի 8.2%-ի համեմատ նվազելով 0.5 տոկոսային կետով: Յոթ ամիսների աճը հիմնականում ապահովվել է ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ոլորտների հաշվին:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %



2026թ. հունվար-հուլիս ամիսներին տնտեսական ակտիվության 7.7% աճին հիմնական նպաստում ունեցող ճյուղը եղել է ծառայությունների ոլորտը՝ ապահովելով 3.8 տոկոսային կետ նպաստում: Արդյունաբերության նպաստումը կազմել է 2.2 տոկոսային կետ: Շինարարությունը ևս էական դրական ազդեցություն է ունեցել՝ ապահովելով 1.4 տոկոսային կետ նպաստում: Առևտրի նպաստումը կազմել է 0.4 տոկոսային կետ:


¹ Նախորդ ամիսների ՏԱՑ-ի ամսական ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-հուլիս ամիսներին, տոկոսային կետ²



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճի տեմպի դանդաղումը շարունակվել է նաև հուլիսին: 2026թ. հուլիսին արդյունաբերական արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 3.1%-ով՝ հունիսի 4.0% աճի դիմաց: Արդյունքում՝ 2026թ. հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը կազմել է 9.5%՝ հունվար-հունիսի 10.8%-ի համեմատ նվազելով 1.3 տոկոսային կետով:

² Նպաստումների հաշվարկն իրականացվել է SUՑ-ի 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

2026թ. հունվար-հունիս³ ամիսներին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 10.8%-ով: Աճի հիմնական աղբյուրները եղել են հանքագործական և մշակող արդյունաբերության ճյուղերը, որոնց նպաստումներն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար շուրջ 5.1 և 4.9 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման թողարկումն աճել է 28.9%-ով, իսկ մշակող արդյունաբերության թողարկումը՝ 7.4%-ով: Դրական նպաստում է ունեցել նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտը, որի թողարկման 4.5% աճն ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է շուրջ 0.6 տոկոսային կետով: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի աճը կազմել է 4.2%, իսկ նպաստումը՝ շուրջ 0.1 տոկոսային կետ:

Հանքարդյունաբերության բարձր աճը հիմնականում պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 32.5% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է շուրջ 5.3 տոկոսային կետ: Միաժամանակ, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերի թողարկումը նվազել է 16.8%-ով՝ որոշակիորեն զսպելով ոլորտի աճը:

Մշակող արդյունաբերության աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղը՝ շուրջ 3.5 տոկոսային կետ, որի թողարկումն աճել է 32.1%-ով: Նշանակալի դրական նպաստումներ են ապահովել նաև սննդամթերքի արտադրությունը՝ շուրջ 1.9 տոկոսային կետ, խմիչքների արտադրությունը՝ 1.8 տոկոսային կետ, և քիմիական նյութերի ու քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 1.2 տոկոսային կետ: Ընդ որում, քիմիական արտադրանքի թողարկումն աճել է 73.2%-ով: Դրական ազդեցություն են ունեցել նաև կահույքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները՝ յուրաքանչյուրը շուրջ 0.5 տոկոսային կետ նպաստմամբ: Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրության նպաստումը կազմել է շուրջ 0.3 տոկոսային կետ, այդ թվում՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրությունն աճել է 17.0%-ով:


Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթաոլորտներ շարունակել են զսպել ընդհանուր աճը: Առավել նշանակալի բացասական նպաստումներն արձանագրվել են ծխախոտային արտադրատեսակների և այլ խմբավորումներում չներառված մեքենաների ու սարքավորանքի արտադրության ոլորտներում: Դրանց թողարկումները նվազել են համապատասխանաբար 7.5% և

³ Արդյունաբերության հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

66.2%-ով՝ մշակող արդյունաբերության աճին հակազդելով շուրջ 1.3 և 0.8 տոկոսային կետով: Բացասական ազդեցություն են ունեցել նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և էլեկտրական սարքավորանքի արտադրությունները՝ համապատասխանաբար շուրջ 0.3 և 0.2 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում բարձր աճը պահպանվել է նաև հուլիսին, ամսական աճի տեմպը որոշակիորեն արագացել է: 2026թ. հուլիսին շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 26.5%-ով՝ հունիսին արձանագրված 25.4% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը հասել է 25.0%-ի՝ հունվար-հունիսի 24.5%-ի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Չնայած նախորդ տարվա բարձր համեմատական բազային և Երևանի մասով հիպոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ավարտից հետո աճի աստիճանական թուլացման սպասումներին՝ շինարարության ոլորտում շարունակվում են պահպանվել աճի բարձր տեմպերը:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում հուլիսին աճը շարունակել է արագանալ: 2026թ. հուլիսին ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 17.0%-ով՝ հունիսի 16.3% աճի դիմաց: Աճի բարձր տեմպի պահպանման պայմաններում հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը հասել է 13.2%-ի՝ հունվար-հունիսի 12.5% ցուցանիշի համեմատ արագանալով 0.7 տոկոսային կետով:

Հունվար-հունիս ամիսների տվյալներով՝⁴ ծառայությունների ոլորտի աճը շարունակել է ձևավորվել ենթաոլորտների լայն շրջանակի դրական դինամիկայի հաշվին: Ընդհանուր աճին առավել մեծ նպաստում են ունեցել «տեղեկատվություն և կապ» և «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաոլորտները՝ համապատասխանաբար շուրջ 2.8 և 2.7 տոկոսային կետ նպաստումներով: Էական է եղել նաև «տրանսպորտ» ենթաոլորտի նպաստումը՝ շուրջ 1.8 տոկոսային կետ, իսկ «կացության և հանրային սննդի կազմակերպում» և «վարչարարական և օժանդակ գործունեություն» ենթաոլորտների նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 1.1 և 0.8 տոկոսային կետ: Դրական նպաստում է ապահովել նաև «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» ենթաոլորտը՝ շուրջ 0.6 տոկոսային կետով: Իսկ կրթության ծառայությունների ծավալը նվազել է 1.0%-ով, սակայն դրա բացասական նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին եղել է գրեթե զրոյական:

⁴ Ծառայությունների ոլորտի հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում գրանցվել է թույլ դինամիկա նաև հուլիս ամսին: 2026թ. հուլիսին առևտրի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 0.1%-ով՝ նույնքան անկում գրանցելով նաև հունիսին: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը կազմել է 0.8%՝ հունվար-հունիսի 0.9% ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



⁵ Արտահանման և ներմուծման 2026թ. նախորդ ամսվա ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

Արտահանման բացասական դինամիկան պահպանվել է նաև հուլիսին, թեև ամսական անկման տեմպը որոշակիորեն մեղմվել է: 2026թ. հուլիսին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել են 15.7%-ով՝ հունիսի 19.4% անկման դիմաց: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսների կուտակային անկումը հասել է 7.9%-ի՝ հունվար-հունիսի 6.4%-ի համեմատ խորանալով 1.5 տոկոսային կետով: Արտահանման բացասական դինամիկայի վրա շարունակել են ազդեցություն ունենալ նաև ՌԴ-ի կողմից հայկական մի շարք ապրանքների նկատմամբ կիրառված սահմանափակումները, այդ թվում՝ հունիսի 12-ից Հայաստանից ծագող և առաքվող ամբողջ ենթակարանտինային արտադրանքի ներմուծման և տարանցման ժամանակավոր սահմանափակումը: Միաժամանակ, հուլիսին ամսական անկման որոշակի մեղմացումը դեռևս բավարար չի եղել կուտակային բացասական միտումը շրջելու համար:

Հունվար-հունիս⁶ ամիսների տվյալներով՝ արտահանման նվազումը շարունակել է հիմնականում պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 52.6% անկմամբ, որի բացասական նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 17.8 տոկոսային կետ: Միաժամանակ, նախորդ ամիսներին բացասական նպաստում ունեցած «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման ծավալը հունվար-հունիսին գրեթե չի փոխվել՝ նվազելով ընդամենը 0.1%-ով, ինչի արդյունքում դրա բացասական նպաստումը դարձել է աննշան:


Արտահանման ընդհանուր անկումը զգալիորեն մեղմվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 80.3% աճի հաշվին, որի դրական նպաստումը կազմել է շուրջ 11.3 տոկոսային կետ: Դրական նպաստումներ են ապահովել նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը՝ արտահանման 5.2% աճով և շուրջ 0.8 տոկոսային կետ նպաստմամբ, ինչպես նաև «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը»՝ համապատասխանաբար 13.6% և 0.2 տոկոսային կետ ցուցանիշներով:

Միաժամանակ, ուշադրության է արժանի բուսական ծագման արտադրանքի արտահանման 25.7% անկումը, որի բացասական նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 1.0 տոկոսային կետ: Հաշվի առնելով հունիսի 12-ից ՌԴ-ի կողմից Հայաստանից ծագող և առաքվող ենթակարանտինային արտադրանքի ներմուծման և տարանցման նկատմամբ կիրառված ժամանակավոր սահմանափակումը՝ այս դինամիկան կարող է արտացոլել սահմանափակումների ազդեցության առաջին դրսևորումները: Այնուամենայնիվ, տվյալ ցուցանիշը

⁶ Արտահանման հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների, դեռևս չեն հրապարակվել:

վերաբերում է հունվար-հունիս ամբողջ ժամանակահատվածին և արտահանման բոլոր ուղղություններին, ուստի միայն այս տվյալների հիման վրա հնարավոր չէ առանձնացնել ՌԴ սահմանափակումների ազդեցության չափը: Դրա համար անհրաժեշտ են հունիս-հուլիս ամիսների, ըստ առանձին ապրանքատեսակների և արտահանման երկրների, մանրամասն տվյալները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դրական դինամիկան հուլիսին շարունակել է ամրապնդվել: 2026թ. հուլիսին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 21.5%-ով՝ հունիսի 15.3% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսների կուտակային աճը հասել է 7.7%-ի՝ հունվար-հունիսի 5.2%-ի համեմատ արագանալով 2.5 տոկոսային կետով:

Հունվար-հունիս ամիսների տվյալներով⁷ ներմուծման աճը հիմնականում ձևավորվել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի հաշվին: Նշված հինգ ապրանքախմբերի ընդհանուր նպաստումը ներմուծման աճին կազմել է շուրջ 14.7 տոկոսային կետ: Առավել մեծ նպաստումն ունեցել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբը, որի ներմուծումն աճել է 24.6%-ով՝ ընդհանուր ցուցանիշին նպաստելով շուրջ 5.0 տոկոսային կետով: Դրան հաջորդել են տրանսպորտային միջոցները՝ 3.1, պատրաստի սննդի արտադրանքը՝ 2.4, հանքահումքային արտադրանքը՝ 2.2, քիմիական արտադրանքը՝ շուրջ 2.0 տոկոսային կետ նպաստումներով:

⁷ Ներմուծման հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների, դեռևս չեն հրապարակվել:


Նշված ապրանքախմբերում արձանագրված բարձր աճի պայմաններում ընդհանուր ներմուծման աճը զգալիորեն ավելի զուսպ է եղել՝ պայմանավորված առանձին խոշոր ապրանքախմբերի էական անկմամբ: Մասնավորապես, ներմուծման աճը զգալիորեն զսպվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ծավալների 64.8% անկմամբ, որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 12.3 տոկոսային կետ: Բացասական ազդեցություն են ունեցել նաև մանածագործական իրերի, կոշկեղենի և թղթից պատրաստված իրերի ներմուծման կրճատումները՝ համապատասխանաբար 7.1%, 17.7% և 13.9%-ով, սակայն դրանց առանձին նպաստումները համեմատաբար փոքր են եղել՝ շուրջ 0.4, 0.2-ական տոկոսային կետ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁸

2026 թվականի հունվար-հունիսին անվանական աշխատավարձերի աճի տեմպը համադրելի է եղել նախորդ տարվա համեմատ, սակայն կառուցվածքը փոխվել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.5%-ով՝ 2025 թվականի համապատասխան ժամանակահատվածի 5.6% աճի դիմաց կազմելով 310.8 հազ. դրամ: Պետական հատվածում աշխատավարձերի աճի տեմպը եղել է 9.1%՝ կազմելով 241.5 հազ. դրամ և նախորդ տարվա համեմատ արագանալով 4.3 տոկոսային կետով (իսկ հունվար-մայիսի համեմատ 0.3 տոկոսային կետով): Միևնույն ժամանակ, ոչ պետական հատվածում անվանական աշխատավարձի աճը դանդաղել է՝ կազմելով 4.3% (միջինում լինելով 337.2 հազ. դրամ)՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ՝ 1.2 տոկոսային կետով: Այսպիսով, ոչ պետական հատվածում արձանագրվել է աշխատավարձերի աճի տեմպի դանդաղում, մինչդեռ պետական հատվածի աշխատավարձերն աճում են բավական բարձր տեմպով:


⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-հունիսին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, 12-ամսյա աճը (%), աճը նշանակում է ՀՀ դրամի արժեւորումը և միջին ամսական անվանական փոխարժեքը (ՀՀ դրամ)



2026 թվականի հուլիսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ արժևորվել է հիմնական արժույթների նկատմամբ: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 366.9 դրամ՝ նախորդ տարվա հուլիսի համեմատ նվազելով 17.2 դրամով: Եվրոյի նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 419.0 դրամ՝ տարեկան կտրվածքով նվազելով 29.7 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 4.7 դրամ՝ նախորդ տարվա հուլիսի համեմատ նվազելով 0.2 դրամով: Ընդհանուր առմամբ, 2026 թվականի հունվար-հուլիսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 4.6%-ով, մինչդեռ ՌԴ ռուբլու և եվրոյի նկատմամբ արժեզրկվել է համապատասխանաբար 6.0%-ով և 0.8%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը հուլիսին որոշակիորեն արագացել է: 2026թ. հուլիսին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 16.3%-ով՝ հունիսի 14.6% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտների կուտակային աճը կազմել է 14.9%՝ հունվար-հունիսի 14.7%-ի համեմատ արագանալով 0.2 տոկոսային կետով:

Եկամուտների աճի հիմնական աղբյուրը շարունակել են մնալ հարկային եկամուտները և պետական տուրքերը, որոնք հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 14.9%-ով՝ ընդհանուր եկամուտների աճին նպաստելով շուրջ 14.1 տոկոսային կետով: Միաժամանակ, ոչ հարկային՝ այլ եկամուտների բացասական դինամիկան որոշակիորեն մեղմվել է, և դրանց կուտակային անկումը հունվար-հունիսի 9.3%-ից հունվար-հուլիսին նվազել է մինչև 5.9%, և ընդհանուր եկամուտների աճին բացասական նպաստումը կազմել է շուրջ 0.3 տոկոսային կետ:

Պաշտոնական դրամաշնորհների ծավալը ևս զգալիորեն գերազանցել է նախորդ տարվա մակարդակը՝ հունվար-հուլիսին կազմելով 21.2 մլրդ դրամ՝ 2025թ. նույն ժամանակահատվածի 3.8 մլրդ դրամի դիմաց: Արդյունքում, դրամաշնորհներն աճել են շուրջ 5.5 անգամ և ընդհանուր եկամուտների աճին նպաստել մոտ 1.0 տոկոսային կետով: Այսպիսով, հուլիսին եկամուտների դինամիկայի որոշակի բարելավումը պայմանավորված է եղել ինչպես հարկային եկամուտների աճի փոքր արագացմամբ, այնպես էլ այլ եկամուտների անկման մեղմմամբ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին առավել մեծ նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը, որոնց մուտքերը 2026թ. հունվար-հուլիսին աճել են համապատասխանաբար 11.9%-ով և 13.2%-ով՝ ընդհանուր ցուցանիշի աճին նպաստելով 3.7 և 3.5 տոկոսային կետով: Նշանակալի դրական նպաստում է ունեցել նաև շահութահարկը, որի մուտքերն աճել են 11.9%-ով՝ ապահովելով շուրջ 2.3 տոկոսային կետ նպաստում: Բնապահպանական և բնօգտագործման վճարների բարձր՝ 77.7% աճն ընդհանուր ցուցանիշին նպաստել է շուրջ 1.6 տոկոսային կետով, իսկ պետական տուրքերի 41.0% աճի նպաստումը կազմել է շուրջ 1.3 տոկոսային կետ: Դրական նպաստում է ունեցել նաև այլ հարկերի 30.2% աճը՝ շուրջ 0.9 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են 0.7%-ով, սակայն դրանց բացասական ազդեցությունը հարկային եկամուտների ընդհանուր աճի վրա եղել է գրեթե զրոյական:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. հունվար-հուլիս		2026թ. հունվար-հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	14.7	14.7	14.9	14.9
Ավելացված արժեքի հարկ	24.4	7.0	11.9	3.7
Ակցիզային հարկ	20.8	1.0	9.9	0.5
Շահութահարկ	19.1	3.5	11.9	2.3
Պետական տուրք	19.2	0.6	41.0	1.3
Մաքսատուրք	0.6	0.0	-0.7	0.0

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-37.7	-1.5	77.7	1.6
Այլ հարկեր	-1.9	-0.1	30.2	0.9
Շրջանառության հարկ	26.3	0.8	17.8	0.6
Եկամտային հարկ	10.0	2.7	13.2	3.5
Սոցիալական վճարումներ	13.4	0.6	14.4	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը հուլիսին շարունակել է արագանալ: 2026թ. հուլիսին պետական բյուջեի ընդհանուր ծախսերը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 20.1%-ով՝ հունիսի 18.3% աճի դիմաց՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերի բարձր աճով: Արդյունքում՝ հունվար-հուլիս ամիսներին բյուջեի ծախսերի կուտակային աճն արագացել է՝ կազմելով 8.9% հունվար-հունիսի 7.0%-ի դիմաց:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն աճել են 17.2%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին ունենալով շուրջ 14.0 տոկոսային կետ դրական նպաստում: Միաժամանակ, կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) շարունակել են մնալ նախորդ տարվա մակարդակից էականորեն ցածր՝ կրճատվելով 26.6%-ով և ընդհանուր ծախսերի աճին հակազդելով շուրջ 5.0 տոկոսային կետով: Այսպիսով, բյուջետային ծախսերի աճը շարունակում է հիմնականում ձևավորվել ընթացիկ ծախսերի հաշվին, մինչդեռ կապիտալ ծախսերի ցածր կատարողականը շարունակում է զսպել ընդհանուր ծախսերի աճը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը/պակասուրդը (-), մլրդ դրամ




Պետական բյուջեն հունվար-հուլիս ամիսներին պահպանել է հավելուրդային դիրքը, թեև հավելուրդի չափը շարունակել է նվազել: 2026թ. հունվար-հուլիս ամիսներին եկամուտների և ծախսերի վերոնշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի շուրջ 32.8 մլրդ դրամ հավելուրդ՝ հունվար-հունիսի 67.3 մլրդ դրամի դիմաց: Այսպիսով, հուլիսին կուտակային հավելուրդը նվազել է շուրջ 34.5 մլրդ դրամով: Միաժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն եղել է պակասուրդային՝ շուրջ 60.7 մլրդ դրամի չափով, ինչի համեմատ 2026թ. բյուջետային հաշվեկշիռը շարունակում է մնալ էականորեն ավելի բարենպաստ:

5.4. Կառավարության պարտք

ՀՀ կառավարության պարտքի աճի տեմպը որոշակի դանդաղել է, սակայն ծավալը շարունակում է աճել: 2026թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը կազմել է 14.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ հունիսի համեմատ աճելով ընդամենը 183.8 մլն ԱՄՆ դոլարով: Նախորդ տարվա հուլիսի համեմատ կառավարության պարտքն աճել է 4.2%-ով, ընդ որում՝ աճի տեմպը հունիսի ցուցանիշի համեմատ դանդաղել է 0.5 տոկոսային կետով: Նույն ժամանակահատվածում ներքին պարտքը (արտահայտված ՀՀ դրամով) նվազել է 1.7%-ով, իսկ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) աճել է 5.7%:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: 2026թ. հուլիսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 6.7%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.2 տոկոսային կետով, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.1 տոկոսային կետով: Հուլիսին թողարկվել են նաև երկարաժամկետ պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կազմել է 8.6%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.3 տոկոսային կետով, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.6 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը հուլիսին որոշակիորեն դանդաղել է, սակայն պահպանվում է ԿԲ թիրախից վերև: 2026թ. հուլիսին 12-ամսյա գնաճը կազմել է 4.5%՝ հունիսի 5.1%-ի դիմաց, նվազելով 0.6 տոկոսային կետով: Չնայած դանդաղմանը՝ գնաճը շարունակում է մնալ Կենտրոնական բանկի $3\pm 1\%$ թիրախային միջակայքի վերին սահմանից բարձր, սակայն հունիսին արձանագրված առավել բարձր մակարդակի համեմատ գնաճային ճնշումները որոշակիորեն մեղմվել են:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը հուլիսին շարունակել է արագանալ: 2026 թվականի հուլիսին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 23.5%-ով՝ հունիսի 20.6%-ի դիմաց: Աճը հիմնականում պայմանավորվել է ռեզիդենտներից ներգրավված ավանդների 25.5% աճով: Միաժամանակ, զգալիորեն արագացել է նաև ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով 16.5%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2026թ. հուլիսին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ավելացմամբ, որի նպաստումը կազմել է շուրջ 11.4 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստումներ են ունեցել նաև ձեռնարկություններից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ համապատասխանաբար շուրջ 3.9 և 3.7 տոկոսային կետով: Միաժամանակ, էականորեն մեծացել է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը՝ հունիսի շուրջ 1.8 տոկոսային կետից հուլիսին հասնելով 3.7 տոկոսային կետի, ինչը ևս նպաստել է ավանդների ընդհանուր աճի արագացմանը: Շահույթ չհետապնդող կազմակերպություններից ներգրավված ավանդների նպաստումը կազմել է շուրջ 0.8 տոկոսային կետ:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը հուլիսին փոքր-ինչ արագացել է՝ պահպանվելով բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.7%-ով՝ հունիսի 24.4%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք տարեկան կտրվածքով աճել են համապատասխանաբար 22.7%-ով և 81.8%-ով: Ընդ որում, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի չափազանց բարձր աճին զգալիորեն նպաստել է նաև նախորդ տարվա հուլիսի ցածր համեմատական բազան, երբ դրանց ծավալը տարեկան կտրվածքով նվազել էր 1.2%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճի տեմպերը հուլիսին պահպանվել են բարձր մակարդակներում՝ կազմելով համապատասխանաբար 23.8% և 21.6%: Ընդհանուր ռեզիդենտների վարկերի 22.7% աճին դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 12.0 և 10.7 տոկոսային կետ: Այսպիսով, իրավաբանական անձանց վարկերի աճի տեմպը հունիսի համեմատ գրեթե չի փոխվել, իսկ տնային տնտեսությունների վարկերի աճը փոքր-ինչ արագացել է:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁹




2026թ. հուլիսին տնտեսության հիմնական ուղղություններին տրամադրված վարկերի աճերը շարունակել են պահպանվել բարձր մակարդակում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին առավել մեծ նպաստում է ունեցել ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերի ավելացումը՝ շուրջ 7.6 տոկոսային կետ, թեև դրա նպաստումը հունիսի համեմատ որոշակիորեն նվազել է: Բարձր է մնացել նաև սպառողական վարկերի նպաստումը՝ կազմելով 6.0 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստումներ են ունեցել հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 3.8 և 3.1 տոկոսային կետով: Գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության ոլորտներին տրամադրված վարկերի նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.4, 1.2 և 1.0 տոկոսային կետ, իսկ այլ ճյուղերի նպաստումը՝ շուրջ 1.7 տոկոսային կետ: Այսպիսով, վարկային աճը շարունակում է առավելապես կենտրոնացած մնալ ծառայությունների, սպառողական և հիպոթեքային վարկավորման ուղղություններում:

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների ներհոսքը, արտահոսքը և զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի կուտակային աճը հունիսին կրկին արագացել է: 2026թ. հունիսին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 292.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հունիսի 75.9 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ շուրջ 3.9 անգամ ավելի, թեև մայիսի 356.8 մլն ԱՄՆ դոլարի համեմատ ամսական զուտ ներհոսքը որոշակիորեն նվազել է: Արդյունքում՝ 2026թ. հունվար-հունիս ամիսներին զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.38 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շուրջ 587.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ աճելով շուրջ 2.34 անգամ կամ 134.4%-ով (հունվար-մայիսի կուտակային աճը կազմել էր 112.0%): Այս զարգացումը հիմնականում պայմանավորված է դրամական միջոցների ներհոսքի զգալի՝ 29.4% աճով, մինչդեռ արտահոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է ընդամենը 1.0%-ով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. հունվար-հուլիս ամիսներին տնտեսական ակտիվության աճը պահպանվել է բարձր մակարդակում, սակայն վերջին ամիսներին նկատվում են դրա աստիճանական դանդաղում և աճի կառուցվածքի անհավասարակշռության խորացում: Հունվար-հուլիսի կուտակային աճը կազմել է 7.7%, որի հիմնական աղբյուրներն են եղել ծառայությունները, արդյունաբերությունը և շինարարությունը: Միաժամանակ, ծառայությունների և

¹⁰ Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2026թ. հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

շինարարության բարձր աճի պայմաններում արդյունաբերության աճը դանդաղել է, իսկ առևտրի աճը մնացել է գրեթե զրոյական: Արտահանման նվազումը, ներմուծման արագացումը, կապիտալ ծախսերի կրճատումը և գնաճի՝ թիրախային միջակայքից բարձր մակարդակը ևս մատնանշում են, որ բարձր ընթացիկ աճը դեռևս ամբողջությամբ չի վերածվում հավասարակշռված և երկարաժամկետ կայուն աճի: Հետևաբար, կարևոր են ոչ միայն աճի տեմպի պահպանումը, այլև դրա կառուցվածքի և որակի բարելավումը՝ հատկապես արտադրողական, ներդրումային և արտահանելի հատվածների դերի մեծացման միջոցով:

2. Արտաքին առևտրում արտահանման և ներմուծման դինամիկան շարունակում է շարժվել հակադիր ուղղություններով: Հուլիսին արտահանման տարեկան անկումը որոշակիորեն մեղմվել է՝ կազմելով 15.7%, սակայն հունվար-հուլիսի կուտակային անկումը խորացել է մինչև 7.9%: Միաժամանակ, ներմուծման աճը հուլիսին արագացել է մինչև 21.5%, իսկ կուտակային աճը՝ մինչև 7.7%: Այս տարբերությունը մեծացնում է արտաքին առևտրային հաշվեկշռի վատթարացման ճնշումը: Ուշադրության արժանի է բուսական ծագման արտադրանքի արտահանման գծով գրանցված 25.7% անկումը, որը կարող է պարունակել ՌԴ-ի կողմից հունիսից կիրառված սահմանափակումների ազդեցության առաջին դրսևորումները, թեև հայտնի տվյալներով դրանց առանձին ազդեցության չափը դեռևս հնարավոր չէ հստակ գնահատել, քանի որ առկա մանրամասն ապրանքային տվյալներն ընդգրկում են սահմանափակումների կիրառման միայն սկզբնական ժամանակահատվածը:

3. Հարկաբյուջետային հատվածում եկամուտների բարձր աճը պահպանվում է, սակայն ծախսերի կառուցվածքը շարունակում է մնալ մտահոգիչ: 2026թ. հունվար-հուլիսին ընթացիկ ծախսերն աճել են 17.2%-ով, մինչդեռ կապիտալ ծախսերը նվազել են 26.6%-ով: Կապիտալ ծախսերի նվազումը շարունակում է պայմանավորված լինել դրանց թերակատարման խնդրով՝ բացասական ազդեցություն ունենալով տնտեսության պոտենցիալի զարգացման վրա:

4. Արտերկրից դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դարձել է ներքին պահանջարկին և արժույթային շուկային աջակցող լրացուցիչ գործոն: 2026թ. հունվար-հունիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.38 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 587.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ աճելով 2.34 անգամ կամ 134.4%-ով: Զգալի զուտ ներհոսքը համադրվում է ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակվող արժևորման հետ: Այսպիսով, դրամական ներհոսքի աճի պայմաններում շարունակել է արժևորվել ՀՀ դրամը, ինչը կարող է բացասաբար ազդել արտահանման մրցունակության վրա:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: